


ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՑԻ

Մէց՝ այն վորքիկ հասարակապետու, | սեր իշխանութեան պաշտպանութեամ՝
թիւններէն մին էր, որք կայսերական | բըն՝ կ'ուղէին իրենց անկախութիւնը
քաղաքի անուամբ և հետեաբար կայ. | պաշտպանել, այն նախանձորդ և շ-



Մայր Եկեղեցին Մէցի:

Հասէր տէրութեանց մէջ, որք զեւրոպէ | վրութիւնին գերմանական, այլ յատ-
արդէն սկսեր էին իրենց մէջը բաժնել. | կապէս ոչ գաղղիացի և ոչ գերմանա-
թէպէտ և 1552էն առաջ լեզունին | ցի էին իրենք. սակայն սահմանուած
գաղղիերէն էր և բարքերնին կամ սո. | և ժամանակին հասած էր կամ միոյն և

կամ միւսոյն պատկանելու : Այն խոր-
հըրգաւոր ոյժն՝ որ ստէպ մեծամեծ
աէրութեանց սահմանները բնդպայնած
է՝ զրաւերով իրեն քովի փոքրիկ իշ-
խանութիւնները, այն խորհրդաւոր դա-
րութիւնն՝ որ զազգութիւնս ձևացուցեր
է, քաղաքներ և գաւառներ ըստ քաղա-
քաղիտական վարչութեան միացուցեր
է, կը սպառնար նաև Մէյի ազատու-
թեան : Վերջապէս Հենրիկոս թէ նրբա-
միտ քաղաքագիտութիւնն յաջողեցաւ
Փրանկիսկեայ Գուիլայի քաջութեամբ,
զՄէց վիճակ մը գարձնել քաղղիտա-
կան պետութեան : Հնայն Աւտորաջիաւ
կան տէրութեան մայրաքաղաքն, այն
ահաւոր քաղաքն՝ որ Լորենի քսերուն
զիշերային յարձակումները կորազըսի
ըրաւ և կարուս Ե՞ւ և Է՞ւ արշաւանաց
դէմկեցաւ Մոզկելլայի զիխաւոր վիճակ
մի եղաւ, և հետեւաբար Գաղղիոյ արե-
կենան հիւսիսային կողման ամենամուր
մարտկոցներէն մին : Բայց 1870 իրեն
տարաբախտ տարին հասաւ, և Մէց
զաղղիտական ընամիր զօրականաց խոր-
տակումը աեսնելէն ետքը, իրեն վրայ
տէր եղող թշնամուն անձնատուր ե-
ղաւ : — Հսու ամենանոր պատմութեան

մը ախուր էջ մը յիշելէն աւելի՝ լոելը
լաւ կը համարինք :

Մէց թէպէտ և քաղաքի մը կեր-
պարանք շընծայեր՝ իրեն ամբողջու-
թիւնը մէկահեղ առնըով, սակայն ունի
գեղցիկ գեղցիկ շէնքեր, լայն և մա-
քուր ճամբաններ և ընդարձակ հրապա-
րակներ : Յիշատակութեան արժանի
գիւսաւոր շինուածներն են՝ քաղաքա-
պետին պալատն, յարկածածկոյթ մեծ
վաճառանոյն, և ասոնցմէտ աւելի հրո-
շակաւոր Մայր եկեղեցին, որոյ շինու-
թիւնն մետասաներորդ գարէն սկսեալ
տեսեց ցվեշտասաներորդ գար :

Գիւտրոս Պերրա չորեկտասաներորդ
դարուն մէջ այս շէնքիս յատակագիծը
տուաւ, բայց իր շինութեան գիւսաւոր
դարերն եղան 1214, 1383, 1478,
1497 և 1519 : — Երեք կամարակապ
թէերէ կը ձեանոյ եկեղեցին, մինոյն
լոյնութիւնն 16 մէզր, իսկ բարձրու-
թիւնն 43 մէզր : Այս մեծագործ շէն-
քըն, որոյ պատկերը կը ներկայացը-
նեմք 'ի Հանդիսիս, իրեն վայելուչ և
գեղցիկ տեսքովն' մին 'ի պանչելեաց
ճարտարապետական արուեստի կրնայ
համարուիլ :

ՀԱՏՈՒՄՆ ԲԱՆԱՄԱՅԻ ՊԱՐԱՆՈՑԻՆ

(Տէս Հատոր ԽԲ. Էջ 357) :

Զյանցից միջին ուղղութիւնն սկիսի ըլլայ 'ի
հիւսիսային արեւմտից դէպ 'ի հարաւային արև-
ելս, զբոթէ երկու հասրատմէդր և կէս հա-
կումն ունենալով, և 75 հազարմէդր երկանու-
թիւն Քոյնի Խորասի գետաբերնէն մինչև
Փէրփայ և Ջլամէնքոյ կողիս : Անտեսն լերանց
շղթաներէն սկսեալ, (որոնք պարանոյին քավե-
րը բրային և տեղ աւ տեղ ալ զաշտացին և ճախ-
ճախուտ կերպարանք ունին, որով և օդոյ ա-
պականութեան պատճառք են), շատ գետեր
վար կը հոսին, յորոց զիխաւորներն են Անդի-
լենան ժողով Թափող Շակը գետն, և Մէծն
Ոխոյ, որ Բանամայի ծոցը կը թափի, որոնց
ընթացքին լրանցքին ուղղութեան համար շատ
կ'օգտեն, թէպէտ և Ջարաշխական մեծամեծ
գործառնութեանց կարօտ ըլլալով : Այս կեր-

պով լրանցքն վաղընէն սկսելով՝ Շակիի գետին
ընթացից կը հետուի քիչ շատ մինչև Ովկովոյ,
և ապա Մեծն Ոխոյի ընթացքը բռնելով՝ Խա-
զուպակնահն մէջ կը մերժանայ :

Խոյ լրանցից խորաթիւնն ամէն տեղ Օ մեղր
պիտի ըլլայ, լոյնութիւնն աշ մեղր, և հողե-
րուն բնութեան համեմատ եղերաց զարկիսց-
րութիւնն ալ կերպարանափոխութիւն կը կրէ :
զոր օրինակ. Ժայռացին հոդիրու վրայ 4 մեղր
և մէկ քասորդ (բարձրութիւնն 4 և խարփի-
խոյն 1 քասորդ մեղրի), իսկ հարային հողե-
րու վայ 1 մեղր ու մէկ կամ երկու քասորդ
մեղրի : — Սխատութիւնը չորս մեծ բաժա-
նումն ունին տեղելոյ, և են : Քոյնն - Ողկոյ
Սոյսատոյ, Պահոյ Սոյտատոյ - Առյոց Պողոս,
Սոյր Պողոս - Լմէկրատոր, Լմէկրատոր - Բա-